

որ հայրենասիրութեան զգացման տեղը բռնած է, որ այնչափ զօրաւոր է մարդկային ազգի ցեղից շատերուն մէջ: Հրեից պէս ամեռող աշխարհիս մէջ սիտուած, անխառն և հարազատ ցեղի կերպարանը մը կը ներկայացընէ, որ միայն արևելեան ազգաց մէջ աղէկ պահուած կը տեսնուի: Կոստանդնուպօլսոյ հայ կանանց թուխ վերարկուին տեղ՝ հոս երկայն ճերմակ քող մը կը բանեցընեն, որ զիրենք ամբողջ կը ծածկէ: Այս զգեստը շատ աղէկ զծազրելով մարմայն ձկը, և վայելուչ փէշերով ինչուան ոտից ծայրը իջնելով երր աղէկ կերպով կրուի՝ կը յիշեցընէ քանի մը յօյն արձանաց վայելուշ զծերը. և այնշափ աւելի զգալի է այս նմանութիւնս, որչափ որ Հայ տիկնայք նշանաւոր են աղնուական գնացքով մը, և անվրէպ զեղեցկութեամբ կերպարանաց »:

### ԱՐՏԱՔՈՅՑ ԿԱՐԴԻ ՄՏՍՈՒԱԲՈՒԹԻՒՆՔ

Տուլպինոս՝ նկարիչ մը կը յիշէ որ մոտքը զրած էր թէ իր մարմայն ոսկոր ները անանկ կակուզ ու դիւրտիւք են, որ ամենազիւրին էր զանոնք ջախջախել կամ ծալել՝ ինչողէս թէ մոմէ շինուած ըլլային: Բորժուգացի բժիշկ մը հիւանդ մ'ունէր որ կը պընդէր թէ ստուած ըլլայ, անանկ որ ամառուան սաստիկ տարուն ալ կրակին քովը կը նատէր: Բժիշկը ոչխրի մորթէ զգեստ մը շինել կու տայ անոր համար, օդիով աղէկ մը օծած, և կը թողու որ կրակին քովը նստի: Տաքութեանստոտկութիւնը զգաւով ըստ որ սաստիկ կը նեղուի, և այնպէս առողջացաւ: Գալէնոս և Ալիկեննաս կը պատմեն անանկներ տեսուած ըլլալ որ ինքզինքնին հօղէ անօթ կը կարծէին, և անոր համար կը զգուշանային ուրիշներէ գալուելու որ չըլլայ թէ կոտրին: Պինէլ կը պատմէ ժամացուցագործի մը համար ու մարդկան անունը պահարակելով, և մէկ մըն ալ այս աւելցուց . « Այս մահը բարեբազ զէսք մըն է, վասն զի աշխարհու եղեռնաւորէ մը աղատեցաւ, որ ետքը ետքը թիու պատժով կեանքը կնքէր պիտի »: Այս խօսքը լսելով ինքզինքը մեռած կարծողը գլուխը վերցուց ու կանչեց անոնց որ պէտք էին

էր: — « Այս ակուաները դիտեցէք, սովոր էր ըսելու. իմիններս ազւոր և ողջ էին, ասոնք բոլորը փտած են »: Կապամիր յիմարութեան վրայ զրած զըրին մէջ մարդու մը համար կը պատմէ թէ կը պնդէր որ բերան չունի. և երբ կերակուրը բռնութեամբ բերնէն վար կը մղէին, կ'ըսէր թէ կուրծքին վրայ բացուած ծակէ մը վար կը խոթէին: Պէնվէնուղոյ Զէլլինի կը պատմէ իր կենսագրութեանը մէջ, թէ իր բանառուած բերդին հրամանատարը պարբերական մտախաբութիւններէ կը ատնջուէր, որ ամէն տարի կը տարբերէին: Երբեմն ձէթի ինքզինքը աման մը կը կարծէր. այլ անգամ գորտ մը՝ ու կը սկսէր ցատկը տեղ: Ուրիշ տարի մը. կը կարծէր թէ մեռած ըլլայ, և հարկ էր այս այլանդակութեանը ձեռնութելով. ուրիշ տարի մը ինքզինքը ջղիկ կը կարծէր, և քալելով ջղիկանց թուչելով հանած ձայնը կը հանէր, և նաև թեւերը և մարմինը կը շարժէր՝ ինչպէս թէ թուչելու վրայ ըլլար: Քիթը՝ մեծ մտածութիւն կու տայ մաղձուներու: Մարգուն մէկը իր քիթը կարգէ դուրս մեծ կը կարծէր, և երբ մէկն կը մոտենար որ իրեն խօսք զուրցէ, մէկն դի կը մերժէր, վախնալով չըլլայ թէ քիթովը աչքը հանէ: Մէկ պատանի մը որ ինքզինքը մեռած կը կարծէր, չերմ սրտիւ աղաչեց իր բարեկամներուն որ զինքը թաղեն: Բժիշկը անոնց խորհուրդ տուաւ որ անոր ուզածը ընեն: Դագաղի մը վրայ կը գնեն զինքը ու եկեղեցին կը ատնին. բայց ճամբան, զուարժարարոյ ընկերացողներէն մէկը, ձեւացնելով յուղարկաւորութեան դէմը ելաւ և հարցուց թէ մեռնողն ով է. իրեն պատասխանեցին ձեւացեալ մեռնողին անունը պախարակելով, և մէկ մըն ալ այս աւելցուց . « Այս մահը բարեբազ զէսք մըն է, վասն զի աշխարհու եղեռնաւորէ մը աղատեցաւ, որ ետքը ետքը թիու պատժով կեանքը կնքէր պիտի »: Այս խօսքը լսելով ինքզինքը մեռած կարծողը գլուխը վերցուց ու կանչեց անոնց որ պէտք էին

ամբշնալ այն կերպով իր անուան համը բաւը աւրելնուն, և եթէ ողջ ըլլար իրենց լրբութիւնը անպատիթ չէր թողուր: Սակայն անոնք նոյնպէս շարունակեցին. մինչև կարծեցեալ մեռելը ալ չկարենալով համբերել, վար ցատկեց ու յարձակեցաւ վրանին. անոնք սկսան առջեէն փախչիլ, ինքն ալ ետենուն վազելով վերջապէս ոգեսպառ գետինը ինկաւ: Զինքը առին անկողինը դրին. բայց այն սաստիկ շարժմունքէն, անանկ արտաշնչութիւն մը ունեցաւ, որ անկէ ետքը անոր զօրութեամբը առողջացաւ:

## ԱՍՏՈՒԾՈՅ ՀՐԵՇՏԱԿԻ (ՊԱՐՍԿԱԿԱՆ ՎԵՊ ՄԲ)

Ջէտի-պէն-կայեաս, փիլխոփայ և ուսումնագէտ, և պարծանք արաբացի մատենագրութեան, հետեւեալ վէպը կը պատմէ:

Տէվրիշին մէկը՝ օր մը իր կնկան ոլրած քանի մը զերծանի կծիկ վաճառելու և ստկովը տղոցը կերակուր գնելու: Վաճառմունքէն ձեռք բերած ստակը դրամ մը (20 հարիւրորդք ֆրանգի) եղաւ, զոր կը պատրաստուէր ուտելեաց ծախելու: Յանկարծ երկու մարդոց կը հանդիպի օր կռուելով՝ անանկ մէկմէկու կը զարնէին՝ մինչ մեծ վտանգ կար իրենց կենաց: Անոնց կռուին պատճառը հարցընելով՝ իմացաւ որ դրամ մըն էր: Այն ատեն տէվրիշը ինքնիրեն մտածեց.

— Ճշգիւ այդ իմ ունեցած զումարսէ. միթէ աղէկ գործ մը բրած չեմ ըլլար եթէ հանեմ ասոնցմէ մէկին տամ, որով արեան թափուիլը արգելում և թերևս իմ նմաններէս մէկուն ալ կեանքը ազատեմ: Միթէ առթիս յարմարագոյն միջոցը այս չէ մի, քան թէ անձնական պիտոյիցս յագուրդը:

Այս մտածելով լաւագոյն ընտրեց անօթութիւնը. և ստակը անոնցմէ մէկուն տալով կարող եղաւ զանոնք հաշ-

աեցրնել: Ասկէ քիչ մը այլայլած տունը դառնալով, իրն ինչպէս որ էր պարզ իր կնկանը պատմեց. և այս ետքինս ալ որ էրկանը բարեսրառութիւնն ունէր, ամենեին մեղագրութեան ձայն մը չհանեց:

Սակայն կերակրոյ ժամանակը անցած էր ու աղաքը հաց կը խնդրէին: Խեղճ կնիկը սենեկին ամեն անկիւն վնատուելով վերջապէս կտոր մը կերպաս գտաւ՝ պատռտած և գունաթափ:

— Ա՛ռ ասիկայ, ըսաւ էրկանը, գնած ծախէ ու մեր անօթութիւնը յազեցնելու բան գնէ. բայց շուտ ըրէ, վասն զի աղաքը դեռ ծոմ են:

Տէվրիշը կերպասը առած՝ քաղքին բոլոր վաճառանոցները վազեց, բայց ոչ ոք այն կերպասին ուշ տուաւ: Եւ սակայն անօթութիւնը երթալով խեղճ տղոց վրայ կը զայրանար: Յանկարծակի մարդու մը կը հանդիպի որ ձեռքը մեծ ձուկ մը բունած կ'երթար: Այս ետքինս ալ ձուկը գնող մը կը վնառէր, բայց ոչ ոք քովը կը մօտենար: Ինչու որ ձուկը դարշահոսութիւնով ողը կ'ապականէր:

— Ահաւասիկ գնողս, ըսաւ ինքնիրեն տէվրիշը, և շիտակ անոր երթալով առանց ուրիշ յառաջաբանի՝ այսպէս ըսաւ.

— Ընկեր, կ'ուզես քու հոտած վաճառքդ իմինիս հետ վոխանակել, այդ սատկած ձուկը տալ և այս քուրջը առնել: Ոչ ոք կ'ուզէ այս անօգուտ բանը առնուլ, և եթէ մենք մեղմով մեր ապրանքէն ազատել չմտածենք՝ մեր կռնակը պիտոր մնայ այն:

— Ըլլա ըսածդ, ըսաւ միւսը, փոփոխենք:

Տէվրիշը ձուկն առած՝ շիտակ տունը վազեց ու կնկանը տուաւ. բայց ինչ եղաւ այս ետքինիս զարմանքը՝ երբ ձկան փորը կտրելով ընդերաց մէջ ամենափառ մարգարիտ մը գտաւ:

— Ո՞րչափ կ'ածէ այս գոհարը, հարցուց տէվրիշին. և կարելի՞ է արդեօք ծախել:

— Չեմ գիտեր, բայց բարեկամ մը